# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/1470 «10» 03 2014 թ.

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13 ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Ի. Եղիազարյանին, մինչև 2014թ. մարտի 20-ը, ժամը 12:00-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2014թ. մարտի 20-ին, ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-14/137»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Ի. Եղիազարյան
հեռ. 514-194